ՀԱՊԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ*

ՀՏԴ-327

Քեռյան Գարիկ
քաղաքական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
garik_keryan@mail.ru, g.keryan@ysu.am

ՀԱՊԿ-ի արդյունավետ գործունեության գնահատման եւ զարգացման հեռանկարների վերաբերյալ համաշխարհային քաղաքականության մեջ գոյություն ունեն տարբեր մոտեցումներ: Այս հոդվածում համեմատական վերլուծության հիման վրա փորձեցինք ներկայացնել որոշ քաղաքական հայացքներ, հատկապես հաշվի առնելով Նիկիտինայի կողմից ներկայացված ԱՄՆ-ի դիրքորոշումը այն մասին, որ այդ կազմակերպության քաղաքական ռազմավարությունը օբյեկտիվորեն ձեւավորվում է որպես բջջային միջազգային կառույց, որը համապատասխանում է մասնակից պետությունների շահերին: Հետազոտողներից Ա. Պետրովը կարծում է, որ ՀԱՊԿ-ն նույնացվում է բացառապես Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեխանիզմի հետ, ինչը խոչընդոտում է կազմակերպության երկրների հեռանկարներին լիարժեք մասնակցել եվրատլանտյան անվտանգության ապահովմանը: Դ. Մալըշի կարծիքով, հետխորհրդային տարածաշրջանը շատ դեպքերում հարթակ է հանդիսանում արտատարածաշրջանային (ՆԱՏՕ) և տարածաշրջանային (ՀԱՊԿ, ՇՀԿ) մասնակիցների մրցակցության համար, ինչը ոչ միայն չի ամրապնդում, այլև մեծապես ապակայունացնում է իրավիճակը: Վ. Ն. Զեմսկովը նշում է, որ ներկայիս տարածաշրջանային կառույցները հեռու են իդեալականից: Նա նշում է քաղաքական համերաշխության առանցքային հարցերի շուրջ փոխգործակցության ցածր մակարդակը, որը ապակայունացնում է արտատարածաշրջանային խաղացողների գործոնը: Գ. ի. Շուֆրինը կարծում է, որ ՀԱՊԿ-ը ունիվերսալ միջազգային կազմակերպություն է, որը զբաղվում է անվտանգության ընդհանուր հարցերով: Եվ անվտանգության ոլորտում հայ-ռուսական հարաբերությունները, և ՀԱՊԿ-ին Հայաստանի անդամակցությունը պայմանավորող գործոնները շատ յուրահատուկ են : Ինչպես նշեց Գ. Դանիելյանը, Հայաստանը ՀԱՊԿ "հարավային" մասի ներկայացուցիչ է, այն պետք է իրական անվտանգության համար, Իսկ Մեծ Եվրոպան ՝ ընդհանուր զարգացման համար: Ըստ Վ. Տեր-Մաթոսյանի, ղարաբաղյան հակամարտության առկայության դեպքում ՀԱՊԿ-ին անդամակցությունը բխում է Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ապահովման շահերից:

Բանալի բառեր՝ *ՀԱՊԿ, անվտանգություն, հետխորհրդային տարածաշրջան, Հայաստան, Ռուսաստան, միջազգային կարգ:*

---

* Հոդվածը ներկայացվել է 15.02.2022:
Տպագրության է երաշխավորել ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնը: 23.02.2022:
Հոդվածը տպագրության է ընդունվել 23.02.2022:

Ներածություն

Շուրջ մեկ ու կես ամիս Լեռնային Ղարաբաղում մղվեց լայնամասշտաբ պատերազմ: Ժամանակակից իրողություններով դա բավականին երկար ժամանակ է, եթե տեսնենք նախորդ տարածաշրջանային պատերազմների ժամկետները: Օրինակ՝ այդ նույն ժամանակաընթացքում ջախջախվեց Սադամի մեկ միլիոնանոց բանակը, իսկ արաբա-իսրայելական պատերազմներն ավարտվում էին մեկ շաբաթից տասնհինգ օրվա ընթացքում: Սակայն ընթացիկ համաճարակի, Միջերկրական ծովի ճգնաժամի և ԵՄ ներքին խնդիրների համապատկերում եվրոպացի դիտորդները քիչ ուշադրություն դարձրին Հարավային Կովկասին: Մոսկվան՝ որպես Ադրբեջանի և Հայաստանի հարաբերությունների հիմնական կարգավորող, պատերազմն ավարտին տարավ շահերի հավասարակշռման և Բաքվի ու Երևանի վրա ազդեցության լծակների պահպանման քաղաքական նպատակներով: Իհարկե, կասկածից վեր է, որ ռազմադիվանագիտական ծանր պարտություն կրած Հայաստանի համար սա հարցի լուծման միջանկյալ տարբերակ էր և լիակատար կոլապսից փրկվելու միջոց: Սակայն ղարաբաղյան երկրորդ պատերազմը ցույց տվեց նաև, որ միջազգային կարգի փլուզման արդյունքներն ավելի ակնհայտ են դառնում: Այն օրվանից ի վեր, երբ նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարեց, որ Ռուսաստանը «ոտքի է կանգնում», Կրեմլը մարտահրավեր է նետել հաստատված միաբևեռ միջազգային կարգին և դրա մարմնավորող պետությանը՝ ԱՄՆ-ին, սառը պատերազմի իր նախկին թշնամուն և Եվրամիությանը: Որոշակի հաջողությունների նա արդեն հասել է, բայց ունի նաև կորուստներ: Միջազգային կարգի փլուզումը նաև ունեցավ բումերանգի էֆեկտ Ռուսաստանի համար, հատկապես՝ Հարավային Կովկասում: Առաջին հերթին այն քայքայեց տարածաշրջանային սահմանափակումները: Չգտնելով վերականգնել իր լիակատար գերիշխանությունը հետխորհրդային տարածքում՝ Կրեմլը ստիպված է ընդունել, որ Թուրքիան փոխել է իրավիճակը տեղում և հօգուտ իր տարածաշրջանային դաշնակից-մրցակից Ռուսաստանի թողել է ավելի ու ավելի քիչ տարբերակներ: Շատ դիտորդներ նշում են, որ Կրեմլը վերադարձել է գլոբալ քաղաքականություն, նախ և առաջ որպես 90-ական թթ. հաստատված հետսառըպատերազմյան միջազգային կարգի խարխլող: Այս ձեռագիրը երևաց Սիրիայում, Ուկրաինայում, Վենեսուելայում, Ղարաբաղում: Ռուսաստանին պետք է 90-ական թթ. կորցրած մեծ տերության կարգավիճակի վերականգնում՝ ինչպես գլոբալ, այնպես էլ ռեգիոնալ մակարդակներում, հարևանների վրա ազդելու համար, ինչը և արեց, և անում է արդեն 15 տարի: Կրեմլը կիրառում է տարբեր գործիքներ, բայց նաև XIX դարի եվրոպական մեծ տերության դիվանագիտության բոլոր կանոնները, որոնք օգտագործում է որպես արտաքին քաղաքականության մեթոդաբանություն. ցանկացած «մեծ տերություն» պետք է գերիշխի իր տարածաշրջանում և պայքարի այդ դիրքի ոտնձգության ցանկացած փորձի դեմ: Գունավոր հեղափոխությունների տեսիլքը և «շրջապատված» լինելու վախը ստիպում է ավելի վճռական լինել և ցույց տալ հետխորհրդային պետություններին, որ ինչքան վտանգավոր է հակառուսականությունը: Այս հանգամանքը կարևորում է մեկ անգամ ևս խոսել ՀԱՊԿ-ի մասին, հատկապես՝ Ղազախստանում 2022թ. հունվարին տեղի ունեցած իրադարձություններից հետո: Հայաստանում կազմակերպության նկատմամբ բացասական վերաբերմունքի զգալի աճ է նկատվում: Պատճառը դաշնակիցների չեզոք կրավորական կեցվածքն էր 44-օրյա պատերազմի ընթացքում:

Գրական ակնարկ

Համաշխարհային քաղաքականության մեջ ՀԱՊԿ արդյունավետ գործունեության և զարգացման հեռանկարների գնահատման տարբեր մոտեցումներ կան: Այս հոդվածում մենք փարձել ենք համեմատական վերլուծությամբ ներկայացնել քաղաքագիտական ո-րոշ տեսակետնոր: մասնավորապես՝ ***Յու.Ա. Նիկիտինայի*** *տեսակետը, ըստ որի այս կազ-մակերպության քաղաքական ռազմավարությունը օբյեկտիվորեն ձևավորվում է որպես մասնակից պետությունների շահերին և իրավիճակներին համահունչ և շարժուն միջազ-գային կառույց: Հետազոտողներից Ա. Պետրովը գտնում է, որ ՀԱՊԿ-ը նույնացնում են բացառապես ռուսական արտաքին քաղաքականության մեխանիզմի հետ, ինչը խոչընդ-ոտում է կազմակերպության երկրներին եվրատլանտյան անվտանգության ապահով-մանը լիարժեք մասնակցելու հեռանկարներին: Ըստ* ***Դ. Մալիշևայի,*** *հետխորհրդային տարածաշրջանը շատ դեպքերում հանդես է գալիս որպես մրցակցության հարթակ ոչ տարածաշրջանային (ՆԱՏՕ) և տարածաշրջանային (ՀԱՊԿ, ՇՀԿ) մասնակիցների միջև, ինչը ոչ միայն չի ամրապնդում, այլև շատ առումներով ապակայունացնում է իրավիճակը:* ***Վ.Ն. Զեմսկովը*** *նշում է, որ ներկայիս գործող տարածաշրջանային կառույցները հեռու են իդեալական լինելուց: Նա նշում է քաղաքական կարևորագույն հարցերի շուրջ համագոր-ծակցության ցածր աստիճանը և արտատարածաշրջանային խաղացողների ապակայու-նացնող գործոնը: Գ.Ի. Չուֆրինը կարծում է, որ ՀԱՊԿ-ը ունիվերսալ միջազգային կազ-մակերպություն է, որը զբաղվում է անվտանգության ապահովման ընդհանուր հարցերով: Բավականին յուրահատուկ են ինչպես անվտանգային ոլորտում հայ-ռուսական հարա-բերությունները, այնպես էլ ՀԱՊԿ-ին Հայաստանի անդամակցությունը պայմանավորող գործոնները: Ինչպես նշում է Գ. Դանիելյանը՝ Հայաստանը ՀԱՊԿ-ի «հարավային» թևի ներկայացուցիչ է և անհրաժեշտ է իրական անվտանգության համար, իսկ Մեծ Եվրոպան՝ ընդհանուր զարգացման:* ***Վ. Տեր-Մաթևոսյանի*** *կարծիքով՝ ղարաբաղյան հակամարտութ-յան առկայության պայմաններում ՀԱՊԿ-ի անդամակցումը բխում է Հայաստանի Հանրա-պետության ազգային անվտանգության ապահովման շահերից:*

Քննարկում

ՌԴ-ՀՀ ռազմա-քաղաքական համագործակցությունն ի սկզբանե հիմնականում ընթացել է ՀԱՊԿ շրջանակներում: Այսօր համաշխարհային քաղաքականության մեջ ՀԱՊԿ արդյունավետ գործունեության և զարգացման հեռանկարների գնահատման տարբեր մոտեցումներ կան: Ըստ ***Յու.Ա. Նիկիտինայի՝*** *ՀԱՊԿ-ի զարգացման և ստեղծ-ման պատմությունը ցույց է տալիս, որ այս կազմակերպության քաղաքական ռազմա-վարությունն օբյեկտիվորեն ձևավորվում է որպես մասնակից պետությունների շահե-րին և իրավիճակներին համահունչ և շարժուն միջազգային կառույց, բայց կազմակեր-պությունն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: Այս կառույցի լայն կենտրոնացումը թույլ է տալիս նրան գործել անվտանգության սպառնալիքների հա-մաշխարհային միտումներին համապատասխան, բայց միևնույն ժամանակ կա կազ-մակերպության ռեսուրսները փոշիացնելու վտանգ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բեռի մեծ մասն ընկնում է Ռուսաստանի վրա[1]:*

[1] Տե՛ս Никитина Ю.А. Деятельность ОДКБ и ШОС в Центральной Азии: сравнительный анализ институциональных потенциалов // Центральная Азия: актуальные акценты международного сотрудничества. М.: МГИМО (У), 2010.

*Հետազոտողներից **Ա. Պետրովը** գտնում է, որ արտասահմանյան շատ երկրներ ՀԱՊԿ-ը նույնացնում են բացառապես ռուսական արտաքին քաղաքականության մեխանիզմի հետ և մտավախություն են հայտնում, որ Ռուսաստանն առանձնահատուկ դեր է խաղում այդ կառույցում, ինչը խոչընդոտում է կազմակերպության երկրներին եվրատլանտյան անվտանգության ապահովմանը լիարժեք մասնակցելու հեռանկարներին[1]:*

*Ինչպես նշում են որոշ վերլուծաբաններ, Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում անվտանգության արդյունավետ համակարգին և մասնավորապես՝ ՀԱՊԿ արդյունավետությանը խոչընդոտում է արդեն իսկ կայացած անվտանգության համակարգի ճարտարապետությունը: Ըստ **Դ. Մալիշևայի**՝ հետխորհրդային տարածաշրջանը շատ դեպքերում հանդես է գալիս որպես մրցակցության հարթակ ոչ տարածաշրջանային (ՆԱՏՕ) և տարածաշրջանային (ՀԱՊԿ, ՇՀԿ) և մասնակիցների միջև, ինչը ոչ միայն չի ամրապնդում, այլև շատ առումներով ապակայունացնում է իրավիճակը: Իրավիճակը սրվում է առանձին երկրների, էլիտար խմբերի եսասիրական մտադրություններով, ինչպես նաև նրանց կողմից հավաքական անվտանգության հեռանկարների սխալ ըմբռնմամբ[2]:*

***Վ.Ն. Զեմսկովը**, կանխատեսելով Եվրոպայում հավաքական անվտանգության զարգացման բոլոր հնարավոր ուղղությունների բնույթը, նշում է, որ ներկայիս գործող տարածաշրջանային կառույցները հեռու են իդեալական լինելուց: Մասնավորապես՝ ՀԱՊԿ-ի ցածր արդյունավետությունը նա կապում է մի շարք գործոնների հետ, որոնցից նշում է տարածաշրջանի պետությունների կողմից մեծ մասի կողմնորոշումը դեպի սեփական միակողմանի շահը, ազգային ինքնիշխանության և ազգային անվտանգության գերագնահատումը հավաքական անվտանգության նկատմամբ և կոլեկտիվ շահերի գիտակցման բացակայությունը: Նա նշում է նաև քաղաքական կարևորագույն հարցերի շուրջ համագործակցության ցածր աստիճանը և արտատարածաշրջանային խաղացողների ապակայունացնող գործոնը[3]:*

***Գ.Ի. Չուֆրինը** կարծում է, որ ՀԱՊԿ-ը ունիվերսալ միջազգային կազմակերպություն է, որը զբաղվում է անվտանգության ապահովման ընդհանուր հարցերով: Այնուամենայնիվ, այս համակարգի արդյունավետությունն ամբողջությամբ կախված է նրանից, թե ինչպես են պետությունները լուծում խնդրահարույց հարցերը միմյանց միջև և ինչպես է կազմակերպությունը կարողանում պաշտպանել իր իրավական կարգավիճակը՝ տարածաշրջանի նկատմամբ այլ միջազգային խաղացողների աճող հետաքրքրասիրության պայմաններում[4]:*

Այս առումով պետք է խոստովանել, որ ՀԱՊԿ-ն ՆԱՏՕ-ին չի կրկնօրինակում հավասարազոր ռազմական պարտավորությունների կատարման իմաստով: Մեր կարծիքով այս հանգամանքը որոշակի անվստահություն է ծնում անդամ պետությունների

---

[1] Տե՛ս Петров. А.А. Архитектура евроатлантической безопасности. М.: Экон-Информ, 2009.

[2] Տե՛ս Малышева Д.Б. Центральноазиатский узел мировой политики. М.: ИМЭМО, 2010.

[3] Տե՛ս Земсков В.Н. Развитие региональной системы коллективной безопасности в Евразии //В поисках новой роли: международные организации безопасности в евроатлантическом и евразийском регионах. М.: МГИМО (У), 2011.

[4] Տե՛ս Чуфрин Г.И. Россия в Центральной Азии. Алматы, 2010.

քաղաքական ղեկավարների մոտ և խոչընդոտում է նրան իր կարգավիճակին համահունչ դառնալ քաղաքական, տեղեկատվական և այլ ասպեկտներում ռուսական շահերի իրացման արդյունավետ մեխանիզմ:

Բավականին յուրահատուկ են ինչպես անվտանգային ոլորտում հայ-ռուսական հարաբերությունները, այնպես էլ ՀԱՊԿ-ին Հայաստանի անդամակցությունը պայմանավորող գործոնները: Ինչպես նշում է ***Գ. Դանիելյանը****՝ Հայաստանը ՀԱՊԿ-ի «հարավային» թևի ներկայացուցիչ է: Անդրկովկասյան տարածաշրջանը՝ որպես ռուսական շահերի մեծ կարևորությամբ գոտի, բախվել է քաղաքական, ռազմական և տնտեսական հատուկ սպառնալիքների, որոնք պայմանավորված են տրանսպորտային և էներգետիկ կապուղիների, ռազմաքաղաքական անկայունության և ահաբեկչական գործունեության աճող սպառնալիքներով, էթնոտարածքային աբխազական, հարավօսեթական և դարաբաղյան հակամարտություններով[1]: Գ. Դանիելյանը նշում է, որ ՀԱՊԿ-ն անհրաժեշտ է իրական անվտանգության համար, իսկ Մեծ Եվրոպան՝ ընդհանուր զարգացման[2]:* ***Վ. Տեր-Մաթևոսյանի*** *կարծիքով դարաբաղյան հակամարտության առկայության պայմաններում ՀԱՊԿ-ի անդամակցումը բխում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման շահերից՝ դրանով իսկ ապահովելով կարևոր քաղաքական ռեսուրս, որը Հայաստանին տալիս է որոշակի առավելություններ[3]:*

Արդյունքները

Այս սպառնալիքների դեմ պայքարելու համար Հայաստանն ակտիվորեն համագործակցում է հարևան դաշնակից երկրների, տարածաշրջանային և համաշխարհային ինտեգրացիոն կառույցների հետ: Մեր կարծիքով ներկայումս Հայաստանը ՀԱՊԿ կազմակերպության շրջանակներում տարածաշրջանում քաղաքական և ռազմական ինտեգրման ամրապնդման ամենաակտիվ ջատագովներից է, որովհետև Հայաստանի կառավարությունը Ռուսաստանին տեսնում է որպես սեփական անվտանգության, ինչպես նաև՝ տարածաշրջանի ընդհանուր անվտանգության երաշխավոր: Հայ-ռուսական հարաբերությունների փոխգործակցությունը ռազմական ոլորտում ուղղված է երկու երկրների՝ համագործակցության հարավային թևի անվտանգության ապահովմանը և Անդրկովկասյան տարածաշրջանում կայունության հաստատմանը: Այսօր Հայաստանում է գտնվում 102-րդ ռուսական ռազմաբազան, որտեղ ստեղծվել է ռուս-հայկական միացյալ զորախումբ: Հայաստանի և Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ ծառայությունը համատեղ պաշտպանում է Թուրքիայի և Իրանի հետ սահմանները[4]: ՌԴ խաղաղապահ զորամիավորումներն Արցախի բնակչության անվտանգության և հայ-ադրբեջանական սահմանի կայունացման միակ երաշխավորն են 2020 թ. արցախյան երկրորդ պատերազմից հետո: Ռուսաստանի հետ Հայաստանի ռազմավարական գործընկե-

---

[1] Տե՛ս Даниелян Г.А. Российско-армянские отношения и их роль в обеспечении безопасности на Кавказе: дис. канд. полит. наук. СПб., 2010.

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Тер-Матевосян В.А. Нагорно-Карабахский конфликт в контексте трансформационных особенностей приоритетов региональной безопасности государств Южного Кавказа // Приложение к военно-научному журналу «Айкаканбанак» («Армянская армия»). Ереван, 2011.

[4] Российско-армянские отношения // Министерство иностранных дел Российской Федерации. 18.02.2009. URL: http://www.ln.mid.ru/ (дата обращения: 14.09.2012).

ությունը և ՀԱՊԿ շրջանակներում հարաբերությունների զարգացումը Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության ուղղությունների և ՀԱՊԿ շրջանակներում փոփոխությունների հետևանք են՝ առավել արդյունավետ և իրական մեխանիզմներ ստեղծելու համար:

Այս փաստերը խոսում են երկու դաշնակից երկրների միջև փոխշահավետ երկկողմ համագործակցության մասին և կայուն հիմք են ստեղծում տարածաշրջանային մակարդակով փոխգործակցության համար: Հայաստանն ու Ռուսաստանը մեծապես կարևորում են ՀԱՊԿ ձևաչափում իրենց մասնակցությունն ու համագործակցությունը ռազմական ոլորտում, որն ամրագրված է հիմնարար նորմատիվ փաստաթղթերում: Ե՛վ 2007 թ., և՛ 2020 թ. ընդունված ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության համաձայն՝ Հայաստանն առաջնորդվում է ներգրավվածության և փոխլրացման սկզբունքներով՝ տարածաշրջանում գործող բոլոր շահագրգիռ ռազմական ուժերով՝ պահպանելով հավասարակշռությունը: Հայաստանը երկիր է, որն անտարբեր չի մնում տարածաշրջանային և համաշխարհային ինտեգրացիոն գործընթացների հարցերով և իրեն համարում է տարածաշրջանային և միջազգային ոլորտներում զարգացող գործընթացների լիիրավ մասնակից[1]: Միաժամանակ պետք է նշել նաև, որ ՆԱՏՕ-ին անդամակցությունը երբեք դրված չի եղել ՀՀ արտաքին քաղաքականության գերակայությունների մեջ:

Լեռնային Ղարաբաղում խաղաղապահության հարցը բառացիորեն Հայաստանի Հանրապետության գլխավոր խնդիրն է ՀԱՊԿ-ի հետ համագործակցության հարցում: ՀՀ-ն իրեն համարում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ապրող ժողովրդի անվտանգությունն ու նրա ընտրած ապագա զարգացման ուղին ապահովող երաշխավոր, միաժամանակ ըստ Ռազմական դոկտրինի, ՀԱՊԿ-ին համարում է իր տարածքային ամբողջականության պահպանման հիմնական դաշնակիցը: Օրինակ՝ Հայաստանի վրա Ադրբեջանի հարձակման դեպքում ՀԱՊԿ-ի մաս կազմող պետությունները, համաձայն ՀԱՊԿ կանոնադրության, պետք է անցնեն Հայաստանի կողմը և դրանով իսկ ռազմական գործողություններ ձեռնարկեն ագրեսոր երկրի դեմ: Միանշանակ, Հայաստանը հույսը դնում է ՀԱՊԿ-ում իր դաշնակիցների օգնության վրա: Հիշեցնենք, որ Ադրբեջանը երկար ժամանակ պնդում էր ժողովրդավարական և տնտեսական զարգացման կազմակերպչական ուժերի (ԿՈՒԱՄ) և/կամ ՆԱՏՕ-ի հիման վրա միջազգային խաղաղապահ կոնտինգենտի ձևավորման վրա, սակայն այսօր Բաքուն այլևս չի առաջադրում այդ պահանջները և ստիպված է հանդուրժել ռուս խաղաղապահներին: Հայաստանը գերադասում է տեսնել ռուս խաղաղապահների նշված կոնտինգենտի բազան, մանավանդ որ, ՄԱԿ-ը փաստացի ճանաչել է ՀԱՊԿ-ի գերիշխող դերը հետխորհրդային երկրների անվտանգության ապահովման գործում, ինչը տալիս է միջազգային լեգիտիմություն և ՀԱՊԿ հնարավոր մասնակցություն Լեռնային Ղարաբաղի խա-

[1] Տե՛ս Стратегия национальной безопасности Республики Армения. 26.01.2007 // Специальный выпуск военно-научного журнала «Айкаканбанак» («Армянская армия»). Ереван, 2007; և file:///C:/Users/user/Documents/Qerjan/%D4%B1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%20%D5%A1%D5%B6%D5%BE%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A3%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%202020%20(1).pdf

ղաղապահ ուժերում[1]: Հայաստանի մասնակցությունը ՀԱՊԿ-ին լուծում է մեր հիմնական ռազմավարական խնդիրները, իսկ այլ կազմակերպությունների հետ մեր միջազգային համագործակցությունը նպատակաուղղված է զարգացնել այն ոլորտները, որոնք անհրաժեշտ են միջազգային կայունացման գործողություններին մասնակցելը:

Այսօր ավելի ու ավելի շատ վերլուծաբաններ հատուկ ուշադրություն են դարձնում ՀԱՊԿ ընդհանուր տեղեկատվական դաշտի խնդրին, որն անհրաժեշտ է կազմակերպության գործունեության ամբողջականության և հետևողականության համար: Ըստ Ա.Վ. Աթանեսյանի՝ «ՀԱՊԿ-ը պետք է դառնա արժեք, որը հասարակական գիտակցության մեջ ասոցացվի անվտանգության հետ, ինչպես որ ՆԱՏՕ-ն արևմտյան աշխարհում ընկալվում է որպես ոչ միայն անվտանգության, այլ նաև՝ շահերի միասնության, սոցիալական ընկալման նմանության երաշխավոր»[2]: ՀԱՊԿ-ը՝ որպես միջազգային արդյունավետ գործող կոլեկտիվ անվտանգության կազմակերպություն, դիտարկվում է և՛ դրական, և՛ բացասական ասպեկտներով: Վերջին տարիների ընթացքում ՀԱՊԿ-ի շրջանակներում ստեղծվել են խաղաղապահ ուժեր, ինչպես նաև՝ արագ արձագանքման հավաքական ուժեր, ՀԱՊԿ վերլուծական ասոցիացիա, որը միավորում է կազմակերպության անդամ երկրների հիմնական քաղաքագիտական և վերլուծական կենտրոնները: Անկախ ամեն ինչից, Ռուսաստանի հետ վաղուց հաստատված պատմական բարեկամական հարաբերություններն ու ռազմաքաղաքական դաշնակցությունը հրամայաբար թելադրում են մնալ այս կազմակերպության մեջ, որովհետև Հայաստանն այսօր շահագրգռված է, առաջին հերթին, երկկողմ և բազմակողմ հիմքերով ռուս-հայկական ռազմական համագործակցության զարգացմամբ: Անվտանգության այլընտրանք դեռևս չկա: Երկու երկրների համար շատ կարևոր է ՀԱՊԿ կայունությունը, քանի որ նա այս տարածաշրջաններում իրավիճակի յուրօրինակ կայունացուցիչ է և կարող է ռուսական առաջնորդությամբ չեզոքացնել արտատարածաշրջանային բացասական ազդեցությունները:

Եզրակացություն

Մինչ 44-օրյա պատերազմը, փորձագիտական շրջանակներում գերիշխում էր այն համոզմունքը, որ հենց ՀԱՊԿ-ն ու Ռուսաստանի և Հայաստանի ռազմաքաղաքական համագործակցությունն են ղարաբաղյան հակամարտության գոտում ռազմական գործողությունների վերսկսման և ողջ Հարավային Կովկասում խաղաղության պահպանման կարևորագույն գործոնը: Ցավոք, ՀԱՊԿ-ի կրավորական կեցվածքը զգալիորեն նպաստեց կազմակերպության հեղինակության անկմանը:

Ստեղծված իրավիճակի մամուլում հրապարակված մեր դիրքորոշումը հանգում է հետևյալ թեզերին[3].

---

[1] Вартанян А.С. Проблема урегулирования конфликта в Нагорном Карабахе и роль международных организаций: дис. … канд. полит. наук. М., 2011.

[2] Атанесян А.В. Проблемы безопасности информационного поля на пространстве ОДКБ // Приложение к военно-научному журналу «Айкаканбанак» («Армянская армия»). 2011.

[3] Տե՛ս https://infocom.am/hy/Article/62323?fbclid=IwAR2TH4znY6eaf9Msg3ttAylqylQAbPdUgXI9hn6EguJsRNDClTf-aB7CoKA

- ՀԱՊԿ ղեկավարությունում հասկացել են, որ, եթե չկոտրեն ստեղծված մթնոլորտը, հակառուսական տրամադրությունները կարող են ավելի բորբոքվել: ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ստանիսլավ Զասի այցելությունը Հայաստան 2021թ. օգոստոսին նպատակ ուներ առաջին հերթին կոտրել արդեն ստեղծված եւ կործրացող կարծիքը, որ ՀՀ-ն պետք է դուրս գա այդ կառույցից, հալեցնել առաջացած սառույցը, եւ ինչ-որ առումով աշխուժացնել Հայաստանի՝ ՀԱՊԿ անդամ մնալու կողմնակիցներին: 44-օրյա պատերազմից հետո Հայաստանում բավականին մեծ նեգատիվ վերաբերմունք կար ՀԱՊԿ-ի նկատմամբ, որովհետեւ և՛ հանրության լայն շրջանակներում, և՛ իշխանության, և՛ ընդդիմության օղակներում հաստատվել էր այն հարցը, թե, ամեն դեպքում, ինչու ՀԱՊԿ-ը չմիջամտեց Հայաստանի՝ պատերազմի դադարեցմանն ուղղված ջանքերին, եւ ինչու ՀԱՊԿ-ի դաշնակից Հայաստանը ստիպված եղավ ստորագրել պարտվողական հայտարարություն:

- Այս հանգամանքն էականորեն նպաստեց, որ ՀԱՊԿ-ից դուրս գալու և արևմտյան պետությունների հետ ռազմաքաղաքական դաշնակցության գնալու կողմնակիցները սոցցանցերում և իրենց հրապարակային ելույթներում իշխանություններին կոչ անեն խզել բոլոր կապերը ՀԱՊԿ-ի հետ: Այս նեգատիվ վերաբերմունքն ինչ-որ առումով խորացավ նաեւ այն ժամանակ, երբ սկսեցին հայ-ադրբեջանական սահմանային ընդհարումները, եւ երբ Հայաստանը պաշտոնապես դիմեց ՀԱՊԿ-ին, բայց պատասխանն էականորեն ուշացավ, իսկ պատասխանում ՀԱՊԿ-ը մերժում էր Հայաստանի խնդրանքը՝ աջակցություն ցույց տալու հարցով:

- ՀԱՊԿ ղեկավարության, մասնավորապես Կրեմլում էլ, հասկացել են, որ եթե ինչ-որ առումով չկոտրեն ստեղծված տրամադրությունները, ապա շատ հնարավոր է, որ արեւմտյան կողմնորոշման կողմնակիցներն ավելի շատանան եւ հակառուսական տրամադրությունները դրսի ծառայությունների միջամտությամբ ավելի բորբոքվեն:

- Հայաստանը 2021թ. սեպտեմբերին ստանձնեց ՀԱՊԿ նախագահությունը, եւ այստեղ կա բավականին լուրջ գործիքակազմ, որ Հայաստանը կարողանա փոխել ՀԱՊԿ անդամ պետությունների ընդհանուր տրամադրությունը Հայաստանի նկատմամբ:

ՀԱՊԿ անդամ երկրների ազգային շահերն ընդհանուր առմամբ շատ նման են: Ելնելով յուրաքանչյուր կոնկրետ տարածաշրջանի առանձնահատկություններից՝ նրանք կենտրոնացած են իրենց ազգային խնդիրների շուրջ՝ ինքնիշխանության ամբողջականության պահպանում, պետությունում կայուն դիրք, հակազդում միջազգային և տարածաշրջանային անվտանգության սպառնալիքներին, ահաբեկչությանը և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարին: Այս փաստը նպաստում է ՀԱՊԿ-ի շրջանակներում տարածաշրջանի պետությունների ինտեգրմանը, գործունեության հիմնական ոլորտներին, որոնք ձևավորվում են մասնակից պետությունների անմիջական շահերին համապատասխան:

-Այնուամենայնիվ, չնայած բազմաթիվ ընդհանուր խնդիրներին, մասնակից պետությունները, սեփական շահերն ապահովելու համար, վարում են արտաքին քաղաքականություն, որը ոչ միշտ է համընկնում կազմակերպության գործընկերների շահերի հետ, ավելին, մի զույգ պարզապես հակասում է դրան: Արտաքին քաղաքականության բազմավեկտոր գիծը, որը պայմանավորված է յուրաքանչյուր պետության՝ տարածաշրջանային և արտաքին տարածաշրջանային գործընկերների հետ համագործակ-

ցությունից հնարավորինս մեծ օգուտ ստանալու ցանկությամբ, հաճախ դառնում է հարևանների հետ հարաբերությունների սուր խնդիր: Այս փաստը հակասում է կազմակերպչական կոլեկտիվ սկզբունքին, ինչը հետագայում կարող է բացասաբար անդրադառնալ երկրների արդյունավետ համագործակցության վրա:

- Վերոնշյալ փաստերը վկայում են այն մասին, որ ՀԱՊԿ-ը կարևորագույն դերերից մեկն է խաղում անդամ երկրների ազգային շահերի ապահովման գործում: Այս փուլում կազմակերպության անդամները, հետապնդելով իրենց «եսասիրական» նպատակները, համագործակցության ավելի լավ հեռանկար չեն տեսնում, քան ՀԱՊԿ-ի շրջանակներում: Նրանք գոհ են Ռուսաստանի Դաշնության առաջատար դերից, որը մեծ ջանքեր է գործադրել ԱՊՀ երկրների միավորման համար, և որը պետք է հանդես գա որպես տարածաշրջանում ինտեգրացիոն գործընթացների ներդրող և նախաձեռնող: Այս իրավիճակի հետ կապված՝ կարելի է ենթադրել, որ մասնակից պետությունները, ավելի շահավետ այլընտրանքի բացակայության դեպքում, մոտ ապագայում կպահպանեն այս կարգը, որը ձեռնտու է թե՞ Ռուսաստանին, թե՞ ՀԱՊԿ մնացած անդամներին:

Կազմակերպության վարկանիշն օրեցօր աճում է. այսօր այն ոչ միայն տարածաշրջանային, այլև միջազգային նշանակություն ունի: Դա հաստատում է այն փաստը, որ 2004 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունել է բանաձեւ, որով ՀԱՊԿ դիտորդի կարգավիճակ է շնորհվում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Никитина Ю.А. Деятельность ОДКБ и ШОС в Центральной Азии: сравнительный анализ институциональных потенциалов // Центральная Азия: актуальные акценты международного сотрудничества. М.: МГИМО (У), 2010.
2. Петров. А.А. Архитектура евроатлантической безопасности. М.: Экон-Информ, 2009.
3. Малышева Д.Б. Центральноазиатский узел мировой политики. М.: ИМЭМО, 2010.
4. Земсков В.Н. Развитие региональной системы коллективной безопасности в Евразии //В поисках новой роли: международные организации безопасности в евроатлантическом и евразийском регионах. М.: МГИМО (У), 2011.
5. Чуфрин Г.И. Россия в Центральной Азии. Алматы, 2010.
6. Даниелян Г.А. Российско-армянские отношения и их роль в обеспечении безопасности на Кавказе: дис. канд. полит. наук. СПб., 2010.
7. Тер-Матевосян В.А. Нагорно-Карабахский конфликт в контексте трансформационных особенностей приоритетов региональной безопасности государств Южного Кавказа // Приложение к военно-научному журналу «Айкаканбанак» («Армянская армия»). Ереван, 2011.
8. Российско-армянские отношения // Министерство иностранных дел Российской Федерации. 18.02.2009. URL: http://www.ln.mid.ru/ (дата обращения: 14.09.2012).
9. Стратегия национальной безопасности Республики Армения. 26.01.2007 // Специальный выпуск военно-научного журнала «Айкаканбанак» («Армянская армия»). Ереван, 2007.

10. Вартанян А.С. Проблема урегулирования конфликта в Нагорном Карабахе и роль международных организаций: дис. … канд. полит. наук. М., 2011.
11. Атанесян А.В. Проблемы безопасности информационного поля на пространстве ОДКБ // Приложение к военно-научному журналу «Айкаканбанак» («Армянская армия»). 2011.
12. https://infocom.am/hy/Article/62323?fbclid=IwAR2TH4znY6eaf9Msg3ttAylqylQAbPdUgXI9hn6EguJsRNDClTf-aB7CoKA

REFERENCES

1. Nikitina Ju.A. Dejatel'nost' ODKB i ShOS v Central'noj Azii: sravnitel'nyj analiz institucional'nyh potencialov // Central'naja Azija: aktual'nye akcenty mezhdunarodnogo sotrudnichestva. M.: MGIMO (U), 2010.
2. Petrov. A.A. Arhitektura evroatlanticheskoj bezopasnosti. M.: Jekon-Inform, 2009.
3. Malysheva D.B. Central'noaziatskij uzel mirovoj politiki. M.: IMJeMO, 2010.
4. Zemskov V.N. Razvitie regional'noj sistemy kollektivnoj bezopasnosti v Evrazii //V poiskah novoj roli: mezhdunarodnye organizacii bezopasnosti v evroatlanticheskom i evrazijskom regionah. M.: MGIMO (U), 2011.
5. Chufrin G.I. Rossija v Central'noj Azii. Almaty, 2010.
6. Danieljan G.A. Rossijsko-armjanskie otnoshenija i ih rol' v obespechenii bezopasnosti na Kavkaze: dis. kand. polit. nauk. SPb., 2010.
7. Ter-Matevosjan V.A. Nagorno-Karabahskij konflikt v kontekste transformacionnyh osobennostej prioritetov regional'noj bezopasnosti gosudarstv Juzhnogo Kavkaza // Prilozhenie k voenno-nauchnomu zhurnalu «Ajkakanbanak» («Armjanskaja armija»). Erevan, 2011.
8. Rossijsko-armjanskie otnoshenija // Ministerstvo inostrannyh del Rossijskoj Federacii. 18.02.2009. URL: http://www.ln.mid.ru/ (data obrashhenija: 14.09.2012).
9. Strategija nacional'noj bezopasnosti Respubliki Armenija. 26.01.2007 // Special'nyj vypusk voenno-nauchnogo zhurnala «Ajkakanbanak» («Armjanskaja armija»). Erevan, 2007.
10. Vartanjan A.S. Problema uregulirovanija konflikta v Nagornom Karabahe i rol' mezhdunarodnyh organizacij: dis. … kand. polit. nauk. M., 2011.
11. Atanesjan A.V. Problemy bezopasnosti informacionnogo polja na prostranstve ODKB // Prilozhenie k voenno-nauchnomu zhurnalu «Ajkakanbanak» («Armjanskaja armija»). 2011.

РЕЗЮМЕ

Об экспертных оценках деятельности ОДКБ и армяно-российском военном сотрудничестве

Керян Гарик
ЕГУ, доктор политических наук, профессор
Ереван, Республика Армения

Ключевые слова: Ключевые слова: ОДКБ, безопасность, постсоветский регион, Армения, Россия, международный порядок.

Существуют разные подходы к оценке эффективной деятельности и перспектив развития ОДКБ в мировой политике. В этой статье мы попытались представить некоторые политические взгляды на основе сравнительного анализа, особенно учитывая позицию США Никитиной, что политическая стратегия этой организации объективно формируется как мобильная международная структура, отвечающая интересам государств-участников. Один из исследователей А. Петров считает, что ОДКБ отождествляется исключительно с механизмом российской внешней политики, что препятствует перспективам стран организации полноценно участвовать в обеспечении евроатлантической безопасности. По мнению Д.Малыша, постсоветский регион во многих случаях выступает площадкой для конкуренции внерегиональных (НАТО) и региональных (ОДКБ, ШОС) участников, что не только не укрепляет, но во многом дестабилизирует ситуацию. В.Н. Земсков отмечает, что нынешние региональные структуры далеки от идеальных. Он отмечает низкий уровень взаимодействия по ключевым вопросам политической солидарности, дестабилизирующий фактор внерегиональных игроков. Г.И. Шуфрин считает, что ОДКБ — это универсальная международная организация, которая занимается общими вопросами безопасности. И армяно-российские отношения в сфере безопасности, и факторы, обусловившие членство Армении в ОДКБ, весьма уникальны. Как упоминал Г. Даниелян: Армения – представитель «южной» части ОДКБ, она нужна для реальной безопасности, а Большая Европа – для общего развития. По словам В.Тер-Матосяна, при наличии карабахского конфликта членство в ОДКБ отвечает интересам обеспечения национальной безопасности Республики Армения.

SUMMARY

On Expert Assessments of CSTO Activities and Armenian-Russian Military Cooperation

Keryan Garik
YSU, Doctor of Political Sciences, Professor,
Yerevan, the Republic of Armenia

Keywords: CSTO, security, post-Soviet region, Armenia, Russia, international order.

There are different approaches to assessing the effective activities and development prospects of the CSTO in world politics. In this article, we have tried to present some political views from a comparative analysis. Particularly taking into consideration U.S. Nikitina's view that the political strategy of this organization is objectively shaped as a mobile international structure in line with the interests of the participating states. One of the researchers A. Petrov believes that the CSTO is identified exclusively with the mechanism of Russian foreign policy, which hinders the prospects

of the organization's countries to fully participate in ensuring Euro-Atlantic security. According to D. Malish, the post-Soviet region in many cases acts as a platform for competition between non-regional (NATO) and regional (CSTO, SCO) participants, which not only does not strengthen, but in many ways destabilizes the situation. V.N. Zemskov notes that the current regional structures are far from ideal. He notes the low level of cooperation on key issues of political solidarity, the destabilizing factor of extra-regional players. G.I. Choufrin believes that the CSTO is a universal international organization that deals with general security issues. Both the Armenian-Russian relations in the security sphere and the factors conditioning Armenia's membership in the CSTO are quite unique. As mentioned by G. Danielyan: Armenia is a representative of the "southern" part of the CSTO; it is necessary for real security and Greater Europe for general development. V. According to Ter-Matosyan, in the presence of the Karabakh conflict, CSTO membership is in the interests of ensuring the national security of the Republic of Armenia.